



Բաց հասարակության հիմնադրամները, ակտիվորեն գործելով աշխարհի ավելի քան 70 երկրներում, օժանդակում են արդարադատության ու մարդու իրավունքների, խոսքի ազատության, հանրային առողջապահության և կրթության հասանելիության հարցերում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Առաջադեմ կրթության նոր մեթոդները

2012թ. փետրվարի 17-19-ը Երևանում ԲՀՀ աջակցությամբ իրականացվեցին ինտերակտիվ դասընթացներ բանավեճ-քննարկումների մեթոդների վերաբերյալ ուսանողների և երիտասարդ դասախոսների համար: Դասախոսներին միացան քառասունվեց վերջին կուրսի ուսանողներ և ասպիրանտներ Հայաստանի տասնմեկ համալսարաններից՝ դասընթացներին մասնակցելու նպատակով: Սա առաջինն էր, «վերապատրաստողների վերապատրաստման» դասընթացների շարքում՝ ուղղված բանավիճելու և քննադատական քննարկումների մշակույթի խթանմանը համալսարաններում բանավեճ-քննարկումների ակունքների ստեղծման միջոցով: Բանավեճերի կրթական միջազգային ասոցիացիայի (IDEA International) դասընթացավարները մասնակիցներին ներկայացրեցին բանավիճելու հիմունքները և դրա տարբեր ասպեկտների կարևորությունը ու առնչվող հմտությունները: Բացի այդ, նրանք նաև ներկայացրեցին իրենց փորձը համալսարաններում բանավեճերի ակունքների կազմակերպման և կրթական ոլորտում բանավեճերի մրցույթների կազմակերպման եղանակների վերաբերյալ: Ի լրումն, իրականացվեց նաև առանձին դասընթաց դասախոսների համար բանավեճերի կրթական գործընթացում որպես քննադատական մտածողության խթանման արժեքավոր միջոցի օգտագործման և դրա առավելությունների վերաբերյալ:

Երիտասարդների ներգրավման ծրագրի շրջանակներում ԲՀՀ-Հայաստանի կողմից խթանվել է բանավեճերին ուղղված տարբեր աշխատանքների իրականացումն ու զարգացումը ուսումնական հաստատություններում դասընթացների, ինչպես նաև տեխնիկական և ֆինանսական աջակցության միջոցով: Մինչ այժմ Հիմնադրամը, համագործակցելով Ջինիշյան հիմնադրամի հետ, արդեն իսկ աջակցել է ավելի քան 100 բանավեճերի ուսանողական ակունքների, որոնք համալսարանների ուսանողների համար հանդիսանում են



IDEA դասընթացի մասնակիցները

Այս համարում՝

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- Առաջադեմ կրթության նոր մեթոդները
- Իրականացված ծրագրեր՝ հետագա քայլեր

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

- Անվճար թատերական ներկայացումներ գյուղական քնակավայրերի և անապահով երեխաների համար

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

- Առաջին բժշկական սեմինարը պալիատիվ խնամքի բուժքույրերի համար (ELNEC)

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

- Մարդու իրավունքների ցանցային հանգույցները սկսեցին գործել Գորիսում և Գյումրիում: Գորիսի հանգույցը կազմակերպեց հանրային քննարկում աշակերտուհիների սեռական շահագործման վերաբերյալ

- Մարդու իրավունքների ցանցի ռազմավարության պլանավորման աշխատաժողով
- Երիտասարդությունը 21-րդ դարում. լրատվամիջոցների ճամբարի քննարկում և ստեղծում
- Արվեստ և քաղաքացիական ակտիվություն
- Քաղաքացիական հասարակության մոբիլիզացում՝ հանուն սոցիալական փոփոխությունների
- KargiBerek.am-ը ակտիվորեն աշխատում է

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆԱՆՑ ԾՐԱԳԻՐ

- «Cosmopolitan» ամսագրի քննարկում-հանդիպումները վեր են հանում կանանց առնչվող կարևորագույն հարցեր
- ԿԶԻՊԱ այցելեցին ռեկորդային թվով հայ կանայք

ANNOUNCEMENTS

- Call for Research Proposals: Policy Fellowship Initiative

հետաքրքիր և մրցակցային միջավայրում բանավիճելու, միմյանց հետ մտքեր փոխանակելու և միմյանցից սովորելու վայր: Չնայած Հայաստանի շատ համալսարաններ ունեն բանավեճ-քննարկումների ակումբներ, դրանց մեծ մասն ակտիվ չէ, և ուսանողական կառույցները հազվադեպ են մասնակցում դրանց: Այսպիսի միջոցառումներին աջակցելու միջոցով ԲՀՀ Հայաստանը ցանկանում է վերականգնել այս ակումբների ներգրավվածությունը և ընդլայնել դրանց մասնակցությունը երկրում նոր ակումբների ստեղծման միջոցով: Ուսանողները և դասախոսներն արդեն իսկ մեծ խանդավառությամբ են արձագանքել այս գործընթացին:»

Իրականացված ծրագրեր՝ հետագա քայլեր

2010թ. մայիսից ի վեր Բարձրագույն կրթության ծրագիրն աջակցել է երեք համալսարանի՝ Երևանի պետական համալսարանին (ԵՊՀ), Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանին (ԵՊՃՀ) և Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտին (ՎՊՄԻ) իրենց ուսումնական ծրագրերի և գնահատման մեթոդների համար որակի ապահովման ներքին մեխանիզմների մշակման հարցում: 2011թ. ավարտին վերամշակվել են բակալավրիատի և մագիստրատուրայի ընդհանուր առմամբ ինը ծրագիր հմտությունների վրա հիմնված ուսումնասիրության և գնահատման միջազգային չափանիշները բավարարելու նպատակով:

Աշխատանքի արդյունքները ներկայացվել են համապատասխան ակադեմիական շրջանակներին մի շարք եզրափակիչ սեմինարների միջոցով: 2011թ. դեկտեմբերի վերջին ՎՊՄԻ-ում կազմակերպվեց ամփոփիչ սեմինար Մոցիսյանի մանկավարժության ծրագրի մեկուկես տարի տևողությամբ նախագծի արդյունքները ակադեմիական շրջանակներին, դասախոսներին և ուսանողներին, ինչպես նաև ապագա գործատուներին ներկայացնելու նպատակով: Ուսանողների կողմից իրականացված աշխատանքներից էր հանրային իրազեկման նախաձեռնությունը՝ ուղղված սոցիալական աշխատողի մասնագիտության մասին իրազեկության բարձրացմանը: Ուսանողներն այցելել

են մի շարք հաստատություններ և իրականացրել դրամահավաքություն հաշմանդամ երեխաների համար:

Մարտի 21-ին ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում ներկայացվեց քվանտային ֆիզիկայի նոր ծրագիր մագիստրատուրայի համար: Ծրագիրը մեկ այլ փորձնական դասընթաց է, որը մշակվել է նոր ստանդարտների հիման վրա: Նոր նախաձեռնության քննարկման ժամանակ ծրագրի տնօրեն Ատոմ Մուրադյանը նշեց, որ «ծրագրի մշակումն ընթանում էր դրա հաստատմանը զուգահեռ և 2012թ. սեպտեմբերին մագիստրատուրայի նոր ծրագիրն արդեն կառաջարկվի ուսանողներին»:

Հունվարի 31-ին ԵՊՃՀ Էլեկտրատեխնիկական ֆակուլտետի կողմից կազմակերպվել է ամփոփիչ սեմինար բակալավրիատի ծրագրի արդյունքները ներկայացնելու նպատակով: Սեմինարի ժամանակ ելույթ ունենալիս ծրագրի ղեկավար պրոֆեսոր Բաղդասարյանը նշեց. «Այն, ինչ արվեց ավելին էր, քան դասընթացը որևէ դասախոսի հանձնարարելը. մենք փորձեցինք բավարարել ուսանողների կարիքները մասնակցային ուսուցումից անցնելով արդյունքների վրա հիմնված ուսուցման»:

Հայաստանի բուհական համակարգում մեծանում է ծրագրերը միջազգային ստանդարտների հիման վրա վերամշակման միտումը, որի նպատակն է բարելավել դրանց որակը ներկայիս և ապագա ուսանողների, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, ակադեմիական ավելի լայն շրջանակների համար: Ինչևէ, այս միտումը դիմակայել է մարտահրավերների: Շատ փոփոխությունների ներդրումը սովորական դասասենյակային միջավայրում դանդաղ ընթացք է ունեցել: Չնայած որոշակի աջակցություն է տրամադրվում համալսարանների ընդհանուր ընթացակարգերի և կարողությունների զարգացմանը, կա որոշակի հակադեցություն, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, ծրագրերը լսարանում իրականացնելու համար անհրաժեշտ հմտությունների պակաս: Հենց այս խնդիրն էլ կլինի Բարձրագույն կրթության ծրագրի/ HESP ուշադրության կենտրոնում գալիք ամիսների ընթացքում:»

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԳՐԱՄ

Անվճար քատերական ներկայացումներ գյուղական բնակավայրերի և անապահով երեխաների համար

ԲՀՀ-Հայաստանի Հակաճգնաժամային հիմնադրամ ծրագիրն աջակցել է մի շարք նախագծերի, որոնց նպատակն էր օգնել արվեստի և մշակույթի հաստատություններին և անապահով երեխաներին՝ ընձեռնելով արվեստի և մշակույթի հետ շփվելու հնարավորություն: Այս նախաձեռնությունների շրջանակներում UNIMA Հայ ստեղծագործական խմբին «Կարապետ» տիկնիկային թատրոնի հետ համատեղ շնորհիվ 25,000 ԱՄՆ դոլարի դրամաշնորհ կազմակերպելու համար շրջիկ բացօթյա քատերական ներկայացումներ երկրի տարբեր քաղաքներում և համայնքներում, մեծ թվով սոցիալապես անապահով և խոցելի ընտանիքներ ունեցող շրջաններում, որտեղ առկա է բարոյաբլվածություն, ծանր հոգեբանական միջավայր և սոցիալական մեծ լարվածություն:

2011թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կայացած ներկայացումների նպատակն էր մեծացնել երեխաների իրազեկվածությունը քաղաքացիական և մարդու



Բաղանիս գյուղում քաղաքացիական տիկնիկային ներկայացում

իրավունքների մասին: Հարյուրավոր անապահով երեխաներ և չափահասներ հնարավորություն ունեցան վայելել տոնական և պրոֆեսիոնալ ներկայացումներ՝ մինչև ժամանակ տեղեկանարով իրենց քաղաքացիական իրավունքների և ազատությունների մասին ներկայացումների միջոցով: Հիմնական նպատակն է տիկնիկային թատրոնի միջոցով երեխաների ժամանցը դարձնել ավելի իմաստալից և ուսուցողական: Ներկայացումները տեղի են ունեցել Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Չարենցավանում, Արարատում, Արտաշատում, Մասիսում, Էջմիածնում,

ինչպես նաև Նուբարաշենի և Վարդաշենի գիշերօթիկ դպրոցների երեխաների համար:

Ներկայումս ԲՀՀ-Հայաստանի կողմից տրամադրված 13,740 ԱՄՆ դոլար դրամաշնորհի միջոցով մանօրինակ նախագիծ է իրականացվում «Նարեկ» տիկնիկային թատերախմբի կողմից Լոռու և Տավուշի մարզի 40 հեռավոր գյուղերում: Նախագծի շրջանակներում թատերախումբը ստացել է նոր սարքավորումներ, և նոր երիտասարդ դերասաններին ընձեռվել է թատերախմբին միանալու հնարավորություն:»

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առաջին բժշկական սեմինարը պալիատիվ խնամքի բուժքույրերի համար (ELNEC)

Մարտի 19-21-ը Հայաստանում՝ Դիլիջանում, պալիատիվ խնամքի բարելավմանն ուղղված տեղական կրթական նախաձեռնության՝ ELNEC-ի կողմից կազմակերպվել է առաջին սեմինարը պալիատիվ խնամքի բուժքույրերի համար: Սեմինարին մասնակցում էր սովորող և աշխատող 35 ավագ բուժքույր: Սեմինարի աջակիցներն էին ՄԻԱՎ-ի տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամը, ՀՀ առողջապահության նախարարությունը, ԲՀՀ Հայաստան կազմակերպությունը և ԲՀԻ Միջազգային պալիատիվ խնամքի նախաձեռնությունը:

ELNEC-ի կողմից իրականացվում է պալիատիվ խնամքի ուսուցում բուժքույրական ֆակուլտետի վերջին կուրսի ուսանողների և ասպիրանտների, մանկաբուժության, ուռուցքաբանության, ինտենսիվ թերապիայի և վերակենդանացման, գերիատրիայի/ ծերունաբուժության և այլ բնագավառների բուժքույրերի համար: Ծրագիրը բուժքույրերին ապահովում է գիտելիքներով և հմտություններով, որոնք անհրաժեշտ են մասնագիտացված խնամքի իրականացման և կյանքի վերջին շրջանում լուրջ հիվանդությամբ տառապող հիվանդների և ընտանիքների կյանքի վրա դրական ազդեցություն ունենալու համար:

Ծրագրի թեմաներից էին՝ ցավի գնահատումը և կառավարումը, ախտանիշների կառավարումը, հաղորդակցությունը, էթիկայի հետ կապված հարցեր,



Բուժքույրերի համար առաջին բժշկական վերապատրաստման դասընթացը Դիլիջանում

վիշտը, կորուստը, խնամքը կյանքի վերջին ժամերին և մահը: Սեմինարի վերջում մասնակից մասնագետներին տրվեցին ավարտական հավաստագրեր ELNEC-ից և ՀՀ առողջապահության նախարարությունից:

Հաշվի առնելով Հայաստանում անցկացված առաջին ELNEC սեմինարի հսկայական հաջողությունը՝ ուսուցմանը մասնակցած դասախոսները ցանկություն հայտնեցին ներդնել դասընթացը Հայաստանի բուժքույրական գործ դասավանդող հաստատություններում/բոլեջներում: Հայաստանում պալիատիվ խնամքի մասնագիտության ներդրումը հսկայական քայլ կլինի դեպի անբուժելի հիվանդություններով տառապող հիվանդների կյանքի որակի բարձրացումը և՛ տնային, և՛ հիվանդանոցային պայմաններում:»

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԶԱՂԱԶԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Մարդու իրավունքների ցանցային հանգույցները սկսեցին գործել Գորիսում և Գյումրիում. Գորիսի հանգույցը կազմակերպեց հանրային քննարկում աշակերտուհիների սեռական շահագործման վերաբերյալ

Որպես ԲՀՀ-Հայաստան կազմակերպության «Մարդու իրավունքների ցանց» ծրագրի մաս՝ վերջերս բացվել են երկու շրջանային հանգույցներ, որպեսզի խթանեն և խրախուսեն Հայաստանի քաղաքացիական հասարակության դերակատարների միջև տեղեկատվության մատչելիության բարձրացումը:

և համակարգումը: Այսպիսով, «Մախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի» Գյումրիի մասնաճյուղերը և Գորիսի մամուլի ակումբը դարձան առաջին երկու շրջանային կազմակերպությունները, որոնք հանդես եկան որպես կենտրոնական հանգույց՝ համապատասխանաբար Շիրակի և Սյունիքի մարզերում ցանցը ներկայացնելու համար:

Հանգույցների գործունեության նպատակն է օգնել տեղական ՀԿ-ներին միմյանց միջև կազմել մարզի մարդու իրավունքների խնդիրներին առնչվող կոալիցիաներ: Դրանք կօգտագործեն քաղաքացիական առկա

ռեսուրսները մարդու իրավունքների ոտնահարումներին համատեղ հետևելու և դրանց վերաբերյալ հաղորդումներ տալու համար ու ի պատասխան՝ կազմակերպելու շահերի հանրային պաշտպանության գործողություններ: Հանգույցները ոչ միայն կավելացնեն ակտիվ կազմակերպությունների թիվը, այլ նաև երիտասարդ կազմակերպությունների և ակտիվ խմբերի համար կտրամադրեն ցանցի հարուստ ռեսուրսները: Սա նաև կկամրջի Երևանի և մարզերի միջև տեղեկությունների տարանջատվածությունը:



Մյուսիքի մի խումբ ՀԿ-ներ քննարկում են մարդու իրավունքների խնդիրները Գորիսի մամուլի ակումբում

Հանգույցների գործունեությունն արդեն իսկ դրական ազդեցություն է ունեցել իրենց համայնքներում. մարտի 16-ին Գորիսի մամուլի ակումբը և տեղական այլ ՀԿ-ներ կազմակերպեցին հանրային քննարկում՝ դատապարտելու Հարթաշեն համայնքում աշակերտուհու նկատմամբ սեռական շահագործման միջադեպը: Քննարկման միջոցով կազմակերպվեցին տարբեր նախաձեռնություններ, որոնք ուղղված էին ոտնահարումների դեմ և երեխաների իրավունքների մասին իրազեկմանը:*

Մարդու իրավունքների ցանցի ռազմավարության պլանավորման աշխատաժողով

Փետրվարի 18-19 կազմակերպվեց աշխատանքային հանդիպում Մարդու իրավունքների ցանցի ՀԿ-ների համար, որի նպատակն էր մշակել Յանցի ռազմավարությունը 2012-2014 ֆինանսական տարիների համար: Աշխատաժողովի նպատակն էր մշակել երկամյա ռազմավարական ծրագիր Յանցի ՀԿ-ների առավել կազմակերպված և արդյունավետ աշխատանքի համար: Մասնակիցները Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը զբաղվող, ներկայումս ցանցի անդամ հանդիսացող ՀԿ-ների ղեկավարներն էին: Երկօրյա քննարկումների և մտքերի փոխանակման ընթացքում մասնակիցները համաձայնեցրեցին իրենց համատեղ գործունեությունը՝ ուղղված մարդու իրավունքների հարցերի վերաբերյալ հավաքական իրազեկության բարձրացմանը՝ միասին ամրապնդելով գործողությունները, որոնք կարող են լայն հասարակության շրջանում բարձրացնել իրավապաշտպան կազմակերպությունների տեսանկյունից: Ռազմավարությանը նվիրված նիստը վարում էր «Բաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպությունից Ժիրայր Էդիլյանը, ով

արդյունավետ կերպով կազմակերպեց քննարկում և օգնեց ՀԿ-ներին փոխհամաձայնության գալ իրենց 2012-2014թթ. հավաքական օրակարգի շուրջ: *

Երիտասարդությունը 21-րդ դարում. Բանավեճի և մեդիա արտադրության ճամբար

2012 թ. հունվար-փետրվար ամիսներին երկու շաբաթ ԲՀՀ Հայաստանը՝ Լրատվամիջոցների ցանցային ծրագրի աջակցությամբ կազմակերպեց «Երիտասարդությունը 21-րդ դարի Հայաստանում» առանձնահավաք վեհապանձ Աղվերան առողջարանի ճյուղածածկ լեռներում: Առանձնահավաքը համախմբել էր հավակնոտ լրագրողների, երիտասարդ ակտիվիստների և բլոգերների, որպեսզի մասնակցեն ֆիլմ նկարահանելու, հաղորդելու և հասարակության առջև խոսելու մասին աշխատաժողովի: Ծրագիրը հիմնված էր նմանատիպ հաջողված ծրագրերի վրա, որոնք վարել է IDEA (Բանավեճերի կրթության միջազգային ասոցիացիա) կազմակերպությունը Դրոգատանում և Չիանգմայում 2011թ.:

Առանձնահավաքի նպատակն էր երիտասարդներին տալ այնպիսի հմտություններ, որոնք անհրաժեշտ են Հայաստանում աճող ժողովրդավարության մարտահրավերը ընդունելու համար: Ճամբարի աշխատաժողովներում ներգրավված էին հաղորդավարներ, լուսանկարիչներ և ոլորտի փորձագետներ, որոնք 39 երիտասարդ լրագրողների և ակտիվիստների սովորեցնում էին ինչպես օգտվել տարբեր գործիքներից, սարքերից և համակարգչային ծրագրերից, որոնք խիստ կարևոր են լրատվամիջոցների փոփոխվող բնապատկերը վերահսկելու համար: Բանավեճի հարցերով IDEA-ի հինգ հրահանգիչներ մասնակիցներին ներկայացրեցին բանավեճի և հասարակության առջև խոսելու հիմունքները: Ուսուցման ինտենսիվ ծրագրին զուգորդում էին ինտերակտիվ խաղերն ու մրցույթները, ինչպես նաև մասնակիցների համար ցանցեր ստեղծելու արժեքավոր հնարավորությունները:

Յուրաքանչյուր աշխատաժողով նախատեսված է օգնելու երիտասարդներին վերլուծել լրատվամիջոցների դերը հաղորդելու և քննարկումներ ձևավորելու ու մարզի սոցիալական խնդիրների քաղաքականության վրա ազդելու գործում: Հայաստանի ՉԼՄ մասնագետների օգնությամբ մասնակիցները պատկերացում կազմեցին, թե ինչպես են լրատվամիջոցներն աշխատում տեղական



«Բանավեճ և ՉԼՄ արտադրանք» ճամբարի մասնակիցները Աղվերանում

համատեքստում: Աշխատաժողովները խթանեցին բանավեճ և քննարկում լրատվամիջոցների վրա հիմնված թեմաների շուրջ, ինչպիսիք են օրինակ՝ խոսքի ազատությունը, բռնության վերաբերյալ հաղորդումները, պատերազմի մասին հաղորդելու էթիկան և պետական գրաքննությունը ու մասնակիցներին հնարավորություն տվեցին ձևավորելու անկախ և քննադատական տեսակետներ այն մասին, թե ինչպես լրատվամիջոցները պետք է ներգրավվեն Հայաստանի հասարակության մեջ:

Ճամբարի բարձրակետը եղավ ճամբարի ընթացքում տեղական մասնագետների և լրագրողների կողմից տրամադրված գիտելիքների, հմտությունների և տեխնիկայի կիրառմամբ մասնակիցների կողմից լրատվամիջոցների ծրագիրը, որը պատրաստ է հասարակության շրջանում տարածելու համար:*

Արվեստ և քաղաքացիական ակտիվություն

Մարտին մեկնարկեցին մարդու իրավունքների և սոցիալական տարբեր հարցերին միտված վեց ծրագրեր, որոնց նպատակն էր խթանել մասնակցային ժողովրդավարություն, քաղաքացիական ակտիվություն և քաղաքացիների կողմից իրազեկ որոշումների կայացում՝ որպես գործիք կիրառելով ժամանակակից արվեստն ու մշակույթը: Համաֆինանսավորված լինելով Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի, Բուդապեշտի արվեստի և մշակույթի ծրագրի ու Նյու Յորքի Վավերագրական լուսանկար ծրագրի կողմից, այս նախաձեռնությունը օժանդակեց տարբեր ծրագրերի:

Կային երկու ֆոտոծրագրեր, որոնցից մեկը ուղղված էր երկրում հանքարդյունաբերության հետ կապված առողջական խնդիրներին, իսկ մյուսը ուղղված էր հայկական բանակում մարդու իրավունքների խնդիրներին: Հաջորդը մեկնարկեց ACTV կոչվող այլընտրանքային վիրտուալ հասարակական տարածքը, որը նախատեսված էր օժանդակելու և խթանելու Հայաստանում բնապահպանական ու սոցիալական ակտիվ խմբերին ու շարժումներին: Որպես ACTV մաս՝ մեկնարկեց «Ընկերական խնդրանք» առցանց հեռուստահաղորդումը, որի նպատակն էր սոցիալական լրատվամիջոցների միջոցով տրամադրել այլընտրանքային լուրեր և տեղեկություններ հայկական տարբեր սոցիալական շարժումների վերաբերյալ:

Մշակվեցին երկու ծրագրեր, որոնք, մասնավորապես, միտված էին խորհրդարանական ընտրություններին. դրանց շրջանակում կազմակերպվեցին բացօթյա տիկնիկային թատրոնի ներկայացումներ երեսուն քաղաքներում և գյուղերում՝ ընտրողների և ընտրակեղծիքների վերաբերյալ կրթումը համակցելով նախընտրական կաշառքների ցուցադրությամբ, որը կոչվում էր «Կարդալ Թումանյան - հինգ հազար դրամ»:

Քաղաքացիական հասարակության մոբիլիզացում՝ հանուն սոցիալական փոփոխությունների

Ինչի⁹ է նման լայնամասշտաբ սոցիալական փոփոխությունը: Ի՞նչ ռազմավարություններ և

գործիքներ կարող են օգտագործվել քաղաքացիական հասարակության կողմից՝ նման փոփոխություն խթանելու համար: Ինչպե՞ս կարող է քաղաքացիական հասարակությունը ավելի ազդեցիկ լինել ընդհանուր օրակարգ սահմանելով և փոխադարձ ամրապնդող գործություններ նախագծելու հարցում՝ օգտագործելով չափման ընդհանուր համակարգերը և շարունակական հաղորդակցությունը՝ ունենալով հիմնական կազմակերպությունների աջակցությունը: Այս և այլ հարցերի շուրջ էր կենտրոնացած 2012թ. փետրվարի 9-10-ին Գրետա Գորներտի կողմից անցկացրած քննարկումը:

Տիկին Գորներտը մեծ փորձ ունի կազմակերպական զարգացման ոլորտում և հանդես է գալիս որպես Բաց հասարակության հիմնադրամների տարբեր ծրագրերի անկախ խորհրդատու: Երկօրյա աշխատաժողովի ընթացքում ներկայացվեց կոլեկտիվ ազդեցությունը որպես գործիք օգտագործելու գաղափարը և քննարկվեց ՀԿ աշխատանքների փոխլրացնելիությունը սոցիալական փոփոխությունների հասնելու հարցում: Աշխատաժողովը կազմակերպված էր, որպեսզի հնարավորություն ընձեռներ մասնակիցներին, որոնցից շատերն աշխատում են զարգացման տարբեր ոլորտներում, մտածել առանձին ոլորտներում իրենց անհատական գործողությունների մասին և այդ գործողությունները առավել արդյունավետ դարձնել՝ որոշակի սոցիալական խնդիրներ լուծելու համար: Աշխատաժողովի մասնակիցներին խնդրեցին հարցականի տակ դնել և քննադատաբար գնահատել առանձին միջոցառումների արդյունավետությունը իրենց յուրաքանչյուրի ոլորտում ու համեմատել դրանք միջոլորտային լայն համակարգման և համագործակցության նախաձեռնությունների հետ:

Երկար ժամանակ ընթացելով արդյունավետ կոլեկտիվ գործողությունների կարևորությունը, հատկապես, մարդու իրավունքների խթանման գործում՝ այս աշխատաժողովը հատուկ ուղղված էր ԲՀՀ-Հայաստանի հիմնական գործընկերների միջև ցանցի, համագործակցության և գործակցության կարողությունների բարելավմանը՝ բաց հասարակության նպատակների խթանման նպատակով: Մասնակիցները ընտրվել էին ինչպես փորձառու, այնպես էլ նոր ՀԿ-ներից՝ փորձելով ստեղծել այնպիսի միջավայր, որը նպաստում է ուղղորդման իրականացմանը՝ միաժամանակ ամրապնդելով հին գործընկերությունները և ստեղծելով նորերը: Այս աշխատանքով ԲՀՀ-Հայաստանը նպատակ ուներ ստեղծել այնպիսի միջավայր, որը կօգնի մասնակիցներին հարցականի տակ առնել մարդու իրավունքների աշխատանքների հարցում իրենց ավանդական եղանակներն ու գործելակերպերը և ձևավորել ավելի ազդեցիկ ու արդյունավետ լուծումներ՝ արդեն իսկ նրանց կողմից իրականացվող աշխատանքում:*

KargiBerek.am-ը ակտիվորեն աշխատում է

Փետրվարի 1-ին հասարակության համար բացվեց նոր պորտալ, որի նպատակն էր հանրությանը հնարավորություն ընձեռել՝ հաղորդելու հասարակական աշխատանքների հետ կապված խնդիրները, ինչպիսիք են օրինակ՝ ողողափոսերը, ծառերին հասցված



KargiBerek.am հնարավորություն է տալիս համայնքի անդամներին փաստագրել և ներկայացնել հանրային խնդիրները համապատասխան կառույցներին

վնասները, շենքային խնդիրները և այլն: Kargiberek.am-ը, որ ներկայումս փորձարկվում է Հայաստանի Սիսիան, Վեդի և Վայք քաղաքներում, Բաց հասարակության հիմնադրամի, «Քաունթերփարթ ինթերնեշնլ»-ը, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության համագործակցության արդյունքն է: KargiBerek.am-ը, Մեծ Բրիտանիայում գործող mySociety ՀԿ-ի կողմից ստեղծված FixMyStreet տեղեկատվական բաց աղբյուրի հարմարեցված տարբերակն է, որը նույնպես ներառում է օգտատերերի կողմից հիմնված openstreetmap.org-ի համացանցային միջոցի քարտեզներ: Այս հարթակը հաջողությամբ ներդրվել է Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Նորվեգիայի և Վրաստանի մի շարք քաղաքներում:

Պորտալը համայնքի անդամների համար բացառիկ հնարավորություն է ապահովում՝ համայնքին

մտահոգող խնդիրները անմիջականորեն հաղորդելու պատասխանատու մարզպետարաններին և քաղաքապետարաններին: Միևնույն ժամանակ, ծրագիրը մարզպետարանների և քաղաքապետարանների համար համայնքի խնդիրներին ուղղակիորեն տեղեկանալու և համապատասխան լուծումով արձագանքելու գործիք է ապահովում:

Որպես ծրագրի հաջող իրականացման մաս՝ բոլոր երեք համայնքների ակտիվիստները անցել են ծավալուն գործնական ուսուցում, որպեսզի լրացումներ և փոփոխություններ կատարեն քարտեզում, որտեղ նրանք մշակել են Վայքի, Վեդիի և Սիսիանի openstreetmap.org քարտեզը՝ նկարելով ճանապարհներն ու շենքերը, սահմանելով վայրերի անվանումները ու նշելով տարբեր օբյեկտներ:

Ծրագրի մեկնարկից ի վեր պորտալով արդեն հաղորդվել են համայնքների 18 խնդիրներ, որոնցից են ճանապարհների վրայի աղբը, փողոցների չաշխատող լույսերի վերանորոգումը: Սիսիանի ճանապարհին դիտահորի բացակայող ծածկի մասին հաղորդված խնդիրը հանգեցրեց այն բանին, որ պատասխանատու քաղաքապետարանը խնդիրը լուծեց այն գրանցելուց հետո մեկ օրվա ընթացքում: Վերջերս հաջողությամբ ավարտվեց ծրագրի փորձարկումը և այժմ աշխատանք է տարվում այն ողջ Հայաստանի համայնքներում ներդնելու ուղղությամբ:*

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

«Օրենքի գերատեսչություն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ՝ ԲՀՀ-Հայաստանը սկսեց ուղղորդման տեղական ծրագիր, որի նպատակն էր Հայաստանում ներկայացնել և զարգացնել ռազմավարական դատավարության գաղափարը: Ռազմավարական դատավարությունը մի կողմից շատ որոշակի աշխատանք է, որն ուղղված է դատական համակարգի միջոցով ռազմավարական փոփոխությունների հասնելուն: Մյուս կողմից, որպեսզի արդյունավետ կերպով իրագործվի, այն ներառում է աջակցության մի մեծ մեխանիզմ՝ ուղղորդման հնարավորությունների միջոցով: Այս գործընթացը խթանելու համար ԲՀՀ-Հայաստանը միացավ տեղական և միջազգային փորձագետների թիմին, որպեսզի բարձրացնի ուղղորդումը ռազմավարական դատավարության գործընթացներում:

Այս ծրագրի համար ԲՀՀ-Հայաստանը և «Օրենքի գերատեսչություն» ՀԿ-ն կազմակերպում են մի շարք դասընթացներ մարդու իրավունքներով զբաղվող ՀԿ-ների իրավաբաններ համար և զուգորդում են դրանք դատարավարության հետ կապված ՀԿ-ների աշխատանքների ուղղորդմամբ, ինչը ներառելու է տարբեր ոլորտներում խնդրահարույց հարցերի հետ կապված գործերի հատկորոշում և տեղական ու միջազգային շահագրգիռ անձանց համար աջակցություն դատավարության և փաստաթղթերի մշակման գործում:

Միջազգային ուղղորդումը համատեղ կիրականացվի Լոնդոնում գործող երկու կազմակերպությունների՝ Մարդու իրավունքների իրավական պաշտպանության միջազգային կենտրոնի (Intersights) և Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կենտրոնի (EHRAC) հետ

միասին: Ապրիլից ՀԿ-ների ներկայացուցիչների, այդ թվում՝ իրավաբանների և Interights-ի ներկայացուցիչ Դինա Վեդերնիկովայի միջև հանդիպումներ են տեղի ունեցել, որոնց ընթացքում քննարկվել են Հայաստանում արդարադատության իրականացման հետ կապված արդի հիմնախնդիրներ ու ուրվագծվել են տեղի իրավաբանների և Interights-ի հետագա համատեղ գործունեության հիմնական ուղղությունները: Արդյունքում ծրագրեր են մշակվել ՀԿ-ների իրավաբանների համար, որպեսզի առաջարկեն ռազմավարական դատավարության հնարավոր գործեր, որոնց մի մասը կընտրվի Interights-ի կողմից համատեղ իրականացման և Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացնելու համար:

EHRAC-ի հետ հանդիպումը նախատեսվում է հունիսին, որի ընթացքում մի խումբ իրավաբաններ իրենց մտահոգությունների հետ միասին կներկայացնեն իրենց գործերը, իսկ EHRAC-ի փորձագետները կկիսեն իրենց կարծիքը ու կկատարեն գործուն առաջարկներ:

Այս գործողությունները կբարձրացնեն ներկայացվող գործերի որակը՝ ընդգծելով դրանց ռազմավարական նշանակությունը: Այս ծրագրի նպատակն է բարձրացնել տեղի իրավաբանների արդյունավետությունը օտարերկրյա գործընկերների հետ փորձի փոխանակման միջոցով, որի արդյունքում կիրականացվեն յուրաքանչյուր առանձին գործի համար սահմանված ռազմավարական նպատակները և նպաստել ավելի լավ ռազմավարական դատավարության համակարգ ունենալուն, որը դատական համակարգի և օրենքի գերակայության ամրապնդման առանցքային մեխանիզմ է Հայաստանում:*

«Cosmopolitan» ամսագրի քննարկում-հանդիպումները վեր են հանում կանանց առնչվող կարևորագույն հարցեր

Մեր Կանանց ծրագիրը մշտապես փնտրում է կանանց հզորացման նախաձեռնություններին աջակցելու նոր և ստեղծագործական եղանակներ: Համագործակցությունը լրատվամիջոցների հետ ավանդական և բացասական գեղեցկության կարծրատիպերին դիմակայելու արդյունավետ մեթոդ է: 2011թ. մարտին ԲՀՀ-Հայաստանն աջակցել է մի շարք քննարկումների ծավալմանը Արվեստի ազգային թանգարանում «Cosmopolitan» ամսագրի կողմից կազմակերպված Նորածնությունն արվեստում ցուցահանդեսի շրջանակներում՝ հասկանալու համար կանանց ներկայացումը և գեղեցկային կարծրատիպերը, որոնք առկա են հայկական լրատվամիջոցներում այսօր: Այս մեկամսյա ցուցադրության ժամանակ ներկայացվում էին հայ կանանց 20-րդ դարի բազմապիսի արվեստի գործեր: Նպատակն էր մեծացնել իրազեկությունը ներկայացման եղանակների վերաբերյալ երիտասարդների շրջանում և քաջալերել հանրային քննարկումներ, որոնք ավելին էին, քան ուղղակի արվեստի գնահատումն ու սպառումը: Մի շարք բաց դասախոսություններ և միջոցառումներ անդրադառնում էին այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ կանանց պատկերումը հայկական արվեստում, գեղեցկության ոչ իրատեսական ստանդարտները որպես ճնշումների միջոց, բարձրաճաշակ հագնվող կանայք և կանանց պատկերումը լրատվամիջոցներում, արվեստում և նորածնության մեջ այսօր: Այս քննարկումներում միմյանց են հանդիպել մի շարք ֆեմինիստներ, արվեստագետներ և կանանց իրավունքների պաշտպաններ, ինչպես նաև «Cosmopolitan» ամսագրի ընթերցողներ, ովքեր հաճախ են դառնում նորածնության

ԿԶԻՊԱ այցելեցին ռեկորդային թվով հայ կանայք

2012թ. ապրիլի 19-ից 22-ը կանանց իրավունքների պաշտպան, մինչև 2000 ակտիվիստներ, աշխարհի տարբեր երկրներից հավաքվեցին Թուրքիայում՝ Ստամբուլում, Կանանց զարգացման իրավունքների պաշտպանության ասոցիացիայի (ԿԶԻՊԱ) 12-րդ միջազգային ֆորումի շրջանակներում «Տնտեսական իշխանության տրանսֆորմացիան կանանց իրավունքների և արդարության խթանման համար» թեմայի շուրջ բանավեճ-քննարկում ծավալելու և ռազմավարություն մշակելու համար: Կանանց զարգացման իրավունքների պաշտպանության ասոցիացիան (ԿԶԻՊԱ) ֆեմինիստ անդամներից բաղկացած միջազգային կազմակերպություն է, որն աշխատում է կանանց իրավունքների պաշտպանների, կազմակերպությունների և շարժումների տեսակետների բարձրաճանձան և ազդեցության միջազգային մակարդակով ամրապնդման ուղղությամբ էլ ավելի արդյունավետորեն խթանելու համար կանանց իրավունքները: ԲՀՀ-Հայաստանի կողմից ֆինանսավորվել է Հայաստանում կանանց իրավունքների պաշտպանության չորս կազմակերպության ներկայացուցիչների և երիտասարդ ակտիվիստների մասնակցությունը ֆորումում՝ քաջալերելու համար ռազմավարությունների մշակումը և նպաստելու համար կապերի հաստատմանը կանանց միջազգային շարժման և տեղի պաշտպանների միջև: Հաշվի առնելով ֆորումի կարևորությունը աշխարհի տարբեր երկրներից ֆեմինիստների և կանանց իրավունքների պաշտպանների միավորման առումով և ազդեցությունը համաշխարհային օրակարգերի մշակման վրա քաղաքականություն մշակողների և դոնորների համար՝ ԲՀՀ-Հայաստանը ցանկացավ ապահովել Հայաստանի կանանց կարծիքների և տեսլականների պատշաճ ներկայացումն ավելի լայն համաշխարհային լսարանին և ամրապնդել կապերը կանանց միջազգային խմբերի հետ: Ֆորումի ընթացքում անդրադարձ կատարվեց հարցերի լայն շրջանակի, ինչպիսիք են՝ շարժման ստեղծումը, արաբական գարունը, համաշխարհային կառավարումը, հարկահանման քաղաքականությունը, տնտեսական հզորացումը, միլիտարիզմը և բռնությունները, տնտեսական արդարությունը և այլն, որոնք բավականին ակտիվացրեցին բանավեճերը հայ կանանց իրավունքների պաշտպան խմբերում, որոնք ներգրավված են ծառայությունների մատուցման ոլորտներում, և ընձեռեցին Հայաստանում կանանց կյանքի որակի բարելավման ստեղծագործական ռազմավարությունների դիտարկման հնարավորություն:



Հրավիրված գեկուցողները Ազգային պատկերասրահում

միտումների և գեղեցկության ստանդարտների գոհեր, «զվարճանքի և ազատ մթնոլորտում» ֆեմինիստական հարցերի շուրջ բանավիճելու նպատակով: Ծրագրի շրջանակներում հաջողվեց ստեղծել հարթակ ներկայումս հայ կանանց պատկերման քննադատական ուսումնասիրության և բանավիճելու համար և հզորացման կոչ-ուղերձ հղվեց բոլոր հայ կանանց՝ կայացնել առողջ որոշումներ գեղեցկության և սեքսուալ գրավչության վերաբերյալ: Փակման միջոցառման ժամանակ ներկայացվեց հզորացման ոգեշնչող պատմություն «Բաց գույգը» ներկայացման միջոցով, որի ռեժիսորը Մերժ Մելիք-Հովսեփյանն է: ■

ANNOUNCEMENTS

Call for Research Proposals: Policy Fellowship Initiative

The Policy Fellowship Initiative of the OSF-Armenia invites applications from junior and senior policy researchers eager to carry out rigorous and innovative study identifying the most critical open society challenges and developing practical solutions. The aim of the fellowship is:

- Enhance the capacity of junior researchers to influence the public policy-making process through mentorship including writing and methodology workshops
- Foster participation of civil society in the process of public policy development stimulating debates at all levels of society around the most important policy areas

Eligibility

The fellowship program is open for civil society representatives, university faculty, policy researchers, analysts, and advisers. An advanced university degree in Political or Social Science, Law, Economics, International Relations or related field is required. Experience in policy formulation and analysis, advocacy, and implementation is desirable. Strong and proven research writing skills is highly desirable. Knowledge of English and Armenian, and of computer applications is required. Availability of the fellows to devote significant time to the fellowship is a must. Fellowship applications will be accepted both from individuals and groups.

APPLICATION PROCEDURES

Proposal

Applicants are expected to submit research proposals outlining the following: problem definition and research justification, methodology of research and applicability of results, as well as an elaborate advocacy strategy. The proposal should include itemized budget which can cover such expenses as field work, honorarium, travel costs, and other necessary expenses. The budget for each fellowship should not exceed \$4000. The time frame for research should be from 3 to 6 months. To be considered, interested applicants must also submit the resume, copies of previous research work carried out by the applicant(s), and a full list of publications. The research proposals should be submitted in English; the research itself can be conducted either in English or Armenian.

Fellowship expectations and work product

It is expected that the fellows will produce policy papers, and briefs within the constraints of the 10,000 word limit with concrete recommendations in their respective areas. In addition to the research report specifying clear policy recommendations and options, the fellows may produce a variety of work products, including publications such as books, reports, innovative public-education projects. Fellows may also engage in activities such as hosting panel discussions, traveling to conferences, participating in policy debates, and promoting their ideas in public venues. Selected applicants will go through a mandatory training on policy research and writing.

POLICY RESEARCH AREAS

1. **Human rights and national security: a strategic linkage or flawed paradigms**
2. **Education Reform**
3. **Online democracy in the context of technological convergence**
4. **Armenian women's struggle for identity: gender equality in modern society**

Application submission

All interested applicants should submit fellowship proposals and supporting materials to OSF-Armenia by 17.00, October 26th, 2012, address: 7/1 Tumanyan str., 2nd cul-de-sac and via register@osi.am. For questions and additional information you can contact tel. 53-38-62; 53-67-58 or emails: annak@osi.am.

Հասցե՝ Թումանյան փ. 2-րդ փակուղի, տուն 7/1
Երևան 0002, Հայաստան
Հեռ./Ֆաքս՝ +37410 533862; 536758
Էլ. փոստ՝ info@osi.am
Վեբ կայք՝ www.osi.am, www.partnership.am



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան



Տպագրված է ԱՍՏՂԻԿ տպարանում